ԵՎՐՈՊԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՉՈՎ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ

19.06.2023 10:05

Օրեր առաջ ՀՀ փաստաբանների պալատը դիմել է միջազգային գործընկերներին՝ վերջիններիս ուշադրությունը հրավիրելով Հայաստանում ոստիկանության աշխատակիցների կողմից փաստաբանին բռնության ենթարկվելու դեպքին:

Ի պատասխան, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE) անդրադառնալով 2023թ ընթացքում տեղի ունեցած երկու դեպքերին, խստորեն դատապարտել է փաստաբանների նկատմամբ բռնություններն ու կոչով դիմել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին:

Գրության մեջ մասնավորապես նշված է.

«**Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը խստորեն դատապարտում է վերոհիշյալ փաստաբանների նկատմամբ բռնության այս գործողությունները, և հորդորում է Ձերդ գերազանցությանը անել հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու այդ բռնության դեպքերի լիարժեք և անաչառ քննությունը՝ պատասխանատուներին միջազգային չափանիշներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ի լրումն, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդը ցանկանում է հիշեցնել, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ չվախենալով հաշվեհարդարից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ ոտնձգություններից՝ պահպանելու արդարադատության իրականացման և օրենքի գերակայության անկախությունն ու ամբողջականությունը**»,- ասված է ՀՀ նախագահին ուղղված ուղերձում:

Ստորև ներկայացնում ենք Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) պաշտոնական գրությունն անգլերեն լեզվով և ոչ պաշտոնական թարգմանությունը հայերեն լեզվով.

ԲԵՌՆԵԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

ԲԵՌՆԵԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })